Փիլիսոփայութիւնը իր ընտրած երկրորդ մասնագիտութիւնն է եւ այս առնչութեամբ կարելի է հետեւեալ երեք կէտերը աւելացնել:

Առաջին.- բժշկական մասնագիտական փորձը նրան բերել է այն համոզման, որ մարմնական շեղումների ու հիւանդութիւնների հետեւում «կանգնած» են հոգեկան՝ հոգեբանական, բարոյական, գաղափարական մտահոգութիւններն ու տագնապները, ուստի մարդիկ նախ եւ առաջ պէտք է մտածեն իրենց ներաշխարհի, սրտի ու մտքի առողջութեան, խղճի մաքրութեան, միմեանց հանդէպ մարդավայել յարաբերութիւնների հաստատման մասին: Այլ խօսքով, պարտքն է նրան մղել բարոյագիտութեան ասպարէզ եւ ստիպել գրիչ վերցնել՝ բարոյական օրէնքի կիրառման, ելքերի որոնման եւ բարոյականութեան մասին մարդկանց գիտելիքներով հարստացնելու յոյսով:

Երկրորդ.- բժշկի փորձառությունը նպաստել է, որ գրքում բարոյագիտութեան մասին ներկայացուեն ոչ միայն ամենաանհրաժեշտ, ամենակարեւոր տեղեկութիւնները, այլեւ դրանք մատուցուեն համառօտ, մատչելի, դիւրըմբռնելի եւ, ամենագնահատելին, հայեցի լեզուով (հեղինակը ոչ միայն հայերէն է ներկայացնում օտարածին յայտնի եզրոյթները, այլեւ հետեւողականօրէն գտնում եւ թարգմանում է անյայտ, նոր կամ քիչ գործածուող օտարալեզու հասկացութիւնները): Առհասարակ, նման պարագաններում ոչ-մասնագէտի առաւելութիւնն այն է, որ նա զարմանում ու ոգեւորւում է յայտնագործողի նման, առաջնորդւում է իր նախասիրութիւններով, հեռանում է մասնագիտական գրականության մէջ արմատաւորուած կարծրատիպերից, ուշադրութիւն դարձնում այնպիսի երեւոյթների ու փաստերի վրայ, որոնք յաճախ անհարկի անտեսւում են մասնագէտների կողմից:

Երրորդ.- բժշկի փորձառությունը նպաստել է, որ ան կարենայ կիրառական բարոյագիտութեան մասում ներառնել իր մասնագիտութեան յատուկ բարոյագիտական հարցերը, ինչպէս *բժշկութեան բարոյագիտութիւնը* եւ ասոր առնչուած՝ կենսաբարոյագիտութիւնն ու ծինաբարոյագիտութիւնը:

Գրախօսուող գիրքը հանրագիտարանային բնոյթ ունի, այսինքն՝ ընթերցողը կարող է ընդհանուր պատկերացում կազմել բարոյագիտական մտքի զարգացման հիմնական փուլերի, նշանաւոր բարոյագէտների ուսմունքների, բարոյագիտութեան անտիկ ու արդի տեսութիւնների, բարոյագիտության ոլորտների ու հիմնաւորումների եւ բարոյագիտական հիմնական հասկացութիւնների մասին:

Գրքի վերջաւորութեան տեղադրուած «Յաւելուած» մասը, ճոխացել է աշխատասիրութեան մէջ տեղ գտած անունների ցանկով եւ մանաւանդ փիլիսոփայական մի բառացանկով, ուր յիշատակութեան արժանի են հայերէնի նոր եզրոյթների ու բառակապակցութիւնների առկայութիւնը եւ մտորոնում-ներ՝ հայերէնի եզրաբանութեան մասին:

Այստեղ, տեղին չեմ համարում աւելի մանրամասն քննարկել ու գնահատել Սարգիս ՔԷհեաեանի աշխատասիրութեան առաւելութիւններն ու թերութիւնները. կարեւորը, ըստ իս, նախ, այն է, որ հրապարակի վրայ է հանրա-